

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 25

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ՆԻՍՏԻ

**ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆԸ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Շ. Վահանյանը, Ա. Բաղդասարյանը, Մ. Մաթևոսյանը, Գ. Արշակյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Ս. Բադալյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Ա. Ներսիսյանն ու Վ. Սաֆարյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը, բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին:

*/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Հարկային արտոնություն տալու մասին:

*/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. <<Արագածոտն>> ԶՕԸ-ին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:

*/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/*

5. <<Կարբիի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:

*/Ջեկուցող՝ Է. Փարվանյան/*

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 195-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

*/Ջեկուցող՝ Շ. Քոթանյան/*

7. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

*/Ջեկուցող՝ Շ. Քոթանյան/*

8. Աշտարակ համայնքի <<Աշտարակի քաղաքային մշակույթի տուն>>, <<Օշականի մշակույթի պալատ>>, <<Ուշի համայնքի մշակույթի տուն>>, <<Նոր Երզնկայի մշակույթի տուն>>, <<Ուջանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ների գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/*

9. Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

*/Զեկուցող՝ Գ. Արոմյան/*

10. ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրում գտնվող անշարժ գույքը ձեռք բերելու /գնելու/ առաջարկության մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

11. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

12. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում և Բազմաղբյուր բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

13. Աշտարակ համայնքի Արտաշավան և Ղազարավան բնակավայրերում փողոցների համարակալման մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

14. Աշտարակ համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերը աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

15. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

16. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

17. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

18. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

19. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի գործառնական նշանակության փոփոխության և աճուրդ-վաճառքով օտարելու համաձայնություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

20. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրը սահմանելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

**17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**Ա. Բաղդասարյանը, Տ. Գալստյանը և Մ. Մկրտչյանը չեն մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38 հոդվածի առաջին մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35/1 հոդվածի պահանջներով, ի գիտություն ընդունել 2023 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը.

	<i>Վարչական բյուջե</i>	<i>Ֆոնդային բյուջե</i>	<i>Ընդամենը</i>
<u>Եկամտային մաս</u>	<u>841103.6</u>	<u>688407.1</u>	<u>1529510.7</u>
<u>Ծախսային մաս</u>	<u>578105.3</u>	<u>94174.8</u>	<u>672280.1</u>

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**Տ. Գալստյանը և Մ. Մկրտչյանը չեն մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Հարկային արտոնություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Գույքահարկի մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> օրենքի 10-րդ հոդվածի, << Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն՝ համաձայն հավելված 1-ի:

**19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**Մ. Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Յ Ի Ն - 4 - <<Արագածոտն>> ԶՕԸ-ին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Արագածոտն>> ԶՕԸ-ի տնօրենի 14.03.2023թ. N 89 գրությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ոռոգման համակարգերի մաքրման և ցանցում առաջացած հրատապ խնդիրները լուծելու նպատակով <<Արագածոտն>> ԶՕԸ-ին տրամադրել 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական աջակցություն:

**17-ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**Գ. Արշակյանը, Մ. Մկրտչյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Յ Ի Ն - 5 - <<Կարբիի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության բաժնի պետ Էմմա Փարվանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Կարբիի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Կ. Հովհաննիսյանի 31.03.2023թ. թիվ 2984 դիմումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ անհրաժեշտ բժշկական սարքավորումներ և տեխնիկա ձեռք բերելու նպատակով <<Կարբիի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ին 2 800 000 /երկու միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**19 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**Մ. Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Յ Ի Ն - 6 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 195-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շուշան

Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 195-Ն որոշման հավելված 5-ը շարադրել նոր խմբագրությամբ:

Մատուցվող ծառայություններ	Դրամ
Համայնքի քաղաքային բնակավայրերի համերգային դահլիճի և նախասրահների վարձակալություն՝ 1 ժամվա համար	25000
Համայնքի գյուղական բնակավայրերում՝ 1 ժամվա համար	15000
Շենքի տարածքներում՝ փորձասենյակներ, նախասրահներ և այլն, մշակութային և մասնագիտացված ուսուցումներ կազմակերպելու նպատակով մատուցվող ծառայությունների վճարները սահմանել՝	
<ul style="list-style-type: none"> <li>• Խմբային պարապմունքներ անցկացնելու համար՝ շաբաթական 6 ժամ ծանրաբեռնվածության դեպքում, ամսական</li> </ul>	15000
<ul style="list-style-type: none"> <li>• Անհատական պարապմունքներ անցկացնելու համար՝ շաբաթական 6 ժամ ծանրաբեռնվածության դեպքում, ամսական</li> </ul>	10000
<ul style="list-style-type: none"> <li>• Պար</li> </ul>	3000
<ul style="list-style-type: none"> <li>• Նկարչություն</li> </ul>	3000

**20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շուշան Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով.

1. Համաձայնություն տալ՝ համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ անշարժ գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությամբ.

- <<Աշտարակ համայնքի Ոսկեվազի թիվ 10 Ռոսաննա Մալճյանի անվան մուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի անշարժ գույքը /սեփ. վկ. N 16032023-02-0003/ <<Աշտարակ համայնքի Ոսկեվազի թիվ 10 Ռոսաննա Մալճյանի անվան մուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին:

- <<Աշտարակ համայնքի Աղծքի թիվ 14 Ջանգակ մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի անշարժ գույքը /սեփ. վկ. N 22062022-02-0061/ <<Աշտարակ համայնքի Աղծքի թիվ 14 Ջանգակ մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին:

- <<Աշտարակ համայնքի Բյուրականի թիվ 15 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի անշարժ գույքը /սեփ. վկ. N 20032023-02-0006/ <<Աշտարակ համայնքի Բյուրականի թիվ 15 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին:

- <<Աշտարակ համայնքի Կոշի թիվ 17 Կվաշ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի անշարժ գույքը /սեփ. վկ. N 20032023-02-0001/ <<Աշտարակ համայնքի Կոշի թիվ 17 Կվաշ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին:

- <<Աշտարակ համայնքի Արագածոտնի թիվ 18 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի անշարժ գույքը /սեփ. վկ. N 04042023-02-0017/ <<Աշտարակ համայնքի Արագածոտնի թիվ 18 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին:

**20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Աշտարակ համայնքի <<Աշտարակի քաղաքային մշակույթի տուն>>, <<Օշականի մշակույթի պալատ>>, <<Ուշի համայնքի մշակույթի տուն>>, <<Նոր Երզնկայի մշակույթի տուն>>, <<Ուջանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ների գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շուշան Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի <<Աշտարակի քաղաքային մշակույթի տուն>>, <<Օշականի մշակույթի պալատ>>, <<Ուշի համայնքի մշակույթի տուն>>, <<Նոր Երզնկայի մշակույթի տուն>>, <<Ուջանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ների գործունեությունը 2023 թվականի ապրիլի 14-ից ժամանակավորապես դադարեցնել: Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գույքերն ընդունել և հանձնել <<Աշտարակի մշակույթի պալատ>> ՀՈԱԿ-ին:

**20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 9 - Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Գոռ Ատոմյանը և առաջարկեց, հիմք ընդունելով «Արագածոտն» ՋՕԸ-ի տնօրենի 28.03.2023թ. N 115 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող VAZ մակնիշի 869 CM 61 համարանիշի /տիպարը՝ 21214/ թեթև մարդատար մեքենան անհատույց օգտագործման իրավունքով «Արագածոտն» ՋՕԸ-ին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**18-ԿՈՂՄ, 1-ԴԵՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**Գ. Արշակյանը չի մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 10 - ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրում գտնվող անշարժ գույքը ձեռք բերելու /գնելու/ առաջարկության մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով «ԱՆՏ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ և 79-րդ հոդվածի 4-րդ կետերի պահանջներով, համաձայնություն տալ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրում գտնվող, Գրիգոր Կարապետի Մանուկյանին պատկանող 0.109հա մակերեսով /կադաստրային ծածկագիր՝ 02-068-0003-0041/ հողամասը 1 300 000 /մեկ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամով /ներառյալ հարկերը/ գնելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Յ Ի Ն – 11 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետին համապատասխան՝ համաձայնություն տալ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելուն:

Համայնքի ղեկավարին՝ նույն կարգի 10-րդ կետին համապատասխան՝ կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզպետին:

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ նախկինում համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերը՝ արոտները և խոտհարքները (բնական կերհանդակներ), վարձակալության տրամադրելիս վարձավճարները սահմանել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N898-Ն որոշմամբ հաստատված կադաստրային գները՝ համաձայն հավելվածի, նրանց նկատմամբ կիրառելով 2 գործակից:

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերը և խոտհարքները կարճաժամկետ վարձակալության տրամադրելիս պայմանագրերը կնքել ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշմանը համապատասխան՝ մարզպետի դրական եզրակացության առկայության դեպքում:

**19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:**



Լ Ս Ե Յ Ի Ն - 12 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում և Բազմաղբյուր բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28.12.2022թ. N2/փ-306 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման հաստատված կարգի 17-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում և Բազմաղբյուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, հողամասերի նշանակության փոփոխությունները:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

**Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Յ Ի Ն - 13 - Աշտարակ համայնքի Արտաշավան և Ղազարավան բնակավայրերում փողոցների համարակալման մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով, Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրում գտնվող նրբանցքին տալ 4 համարը և հասցեն համարել՝

**- Աշտարակ համայնք, Արտաշավան բնակավայր, Երևան-Ապարան մայրուղի, 4-րդ նրբանցք:**

Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի 7-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 1 համարը և հասցեն համարել՝

**- Աշտարակ համայնք, Ղազարավան բնակավայր, 7-րդ թաղամաս, 1-ին փողոց:**

Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի 7-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 2 համարը և հասցեն համարել՝

**- Աշտարակ համայնք, Ղազարավան բնակավայր, 7-րդ թաղամաս, 2-րդ փողոց:**

Արտաշավան և Ղազարավան բնակավայրերի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

**20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - Աշտարակ համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերը աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով «ԱՆՏ ՌԻԵԼԹԻ» ՍՊԻ-ի կողմից 27.03.2023թ. տրված 02-001-0139-0108 ծածկագրով Աշտարակ քաղաքի Ալիխանյան եղբայրների փողոց 7/1 հասցեում գտնվող և 02-001-0139-0107 ծածկագրով Աշտարակ քաղաքի Ալիխանյան եղբայրների փողոց 7/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի շուկայական արժեքների վերաբերյալ եզրակացությունները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող Աշտարակ քաղաքի Ալիխանյան եղբայրների փողոց 7/1 հասցեում գտնվող 775,45քմ կիսակառույցն ու դրա պահպանման և սպասարկման համար առանձնացված 1000քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասն աճուրդ - վաճառքով օտարելու և 7 900 000 (յոթ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ գին սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող Աշտարակ քաղաքի Ալիխանյան եղբայրների փողոց 7/2 հասցեում գտնվող 222,31քմ կիսակառույցն ու դրա պահպանման և սպասարկման համար առանձնացված 500քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասն աճուրդ - վաճառքով օտարելու և 4 200 000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գին սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն – 15 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ուղղակի վաճառքով օտարել Աշտարակ համայնքի բնակավայրերում առկա հողատարածքները:

**20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն – 16 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական, մեկ այլ դեպքում՝ գյուղատնտեսական նպատակային նշանակությունը ջրային հողեր նպատակային նշանակության՝/ոռոգման նպատակով ջրավազանի, պոմպակայանի և օժանդակ շինության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ առաջարկություններին:

**20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն – 17 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29 կետի, «Կառավարության 18.05.2006թ. N 912-Ն, 29.12.2011թ. N 1918-Ն և N 1920-Ն որոշումների պահանջներով, համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**19 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**Ա. Շմավոնյանը չի մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Ց Ի Ն – 18 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն – 19 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի գործառնական նշանակության փոփոխության և աճուրդ-վաճառքով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.09.2006թ. N 1398-Ն որոշումը, նշված որոշմամբ համայնքին հանձնված կադաստրային քարտեզը, ինչպես նաև 2012թ. հաստատված Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագիծն ու գլխավոր հատակագծի «կառուցապատման համար նախատեսված հողատեսքերի բաշխումն ըստ նպատակային նշանակության փոփոխությունների» N 7 քարտեզ-ուրվագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով համաձայնության տալ՝ Աշտարակ համայնքի սեփականությունը հանդիսացող, Աշտարակ համայնքում գտնվող՝ 02-001-0379-0007-ից ծածկագրից 0,08759հա, 02-001-0379-0007-ից ծածկագրից 0,07033հա և 0376-0041 ծածկագրից 0,58253հա հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները բնակավայրերի նշանակության, հասարակական կառուցապատման սահմանելու և դրանք աճուրդ-վաճառքով օտարման ներկայացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությունները:

**20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն – 20 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրը սահմանելու մասին

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2023 թվականի մայիսի 15-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

**20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2023 թվականի ապրիլի 14-ին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

- ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ** \_\_\_\_\_
- ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** \_\_\_\_\_
- ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ** \_\_\_\_\_
- ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ** \_\_\_\_\_
- ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ** \_\_\_\_\_
- ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ** \_\_\_\_\_
- ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ** \_\_\_\_\_
- ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ** \_\_\_\_\_
- ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ** \_\_\_\_\_
- ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ** \_\_\_\_\_
- ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ** \_\_\_\_\_
- ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ** \_\_\_\_\_
- ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ** \_\_\_\_\_
- ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ** \_\_\_\_\_
- ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ** \_\_\_\_\_
- ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ** \_\_\_\_\_
- ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ** \_\_\_\_\_
- ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ** \_\_\_\_\_
- ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ** \_\_\_\_\_
- ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** \_\_\_\_\_

**ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝**

**Շ. Վ Ա Հ Ա Ն Յ Ա Ն**

**ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
**ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ**